

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (68)
2015 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության
ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո ղ հ ու ը ղ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ
Կարեն Գևորգյան -

ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ
Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝ <http://publications.y-su.am/>

Խմբագրությունը կարող է
հրատարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:

e-mail: a_petrosyan@ysu.am
Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ
Գրանցման թիվը՝ 798
Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
18.06.2015

Հանձնված է տպագրության
10.09.2015

С О Ю З Ю Р И С Т О В Р А
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (68)
2015 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артуր Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
е-mail: a_petrosyan@ysu.am
web: <http://publications.yasu.am/>

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.06.2015
Подписано к печати 10.09.2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Իսրայելյան

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 5

Արմինե Մելիքսեթյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՒԹՅԱՆՆ ԱՌՆԶՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ 11

Հասմիկ Սմբատյան

ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ ԲՈՆԵԼԻՍ ՎՆԱՍ ՊԱՌՃԱՌԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19

Արմեն Մանասյան

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՀԵՏ ԶԿԱՊԿԱԾ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԻԺՆԵՐԻ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 25

Էմմա Ավագյան

ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ՀԱՍԿԱՆԱԼԻ ԼԵԶՎՈԿ, ԱՆՀԱՊԱՂ ԵՎ ՀԱՆԳԱՄԱՆՈՐԵՆ
ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԻ ԵՎ ՀԻՄՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ 34

Գոռ Միրզոյան

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՁԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 41

Արամ Այվազյան

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՀԵՏԱԴԱՐՁ ՈՒԺԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ԵՎ ՈՂ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄՔ 56

Լալա Գրիգորյան

ԱԿՆՀԱՅՏ ԱՆՕԳՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 63

Աննա Խաչատրյան

ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ... 69

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԿԱՐԶԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սամվել Մուրադյան

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 76

Սահակ Մանուկյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱԴԵՑՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ84

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սյուզաննա Ավետիսյան

ՊԱՐՏԱԴԻՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ91

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Անի Սիմոնյան

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ..... 104

ՋԱՐԳԱՑՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Անի Սիմոնյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային
իրավունքի ամբիոնի դասախոս*

Ժամանակակից միջազգային իրավունքում զարգացման իրավունքի հիմնախնդիրների ուսումնասիրությունն ամբողջացնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև զարգացման իրավունքի իրավական բովանդակությանը:

Ջարգացման իրավունքի վերաբերյալ հիմնական միջազգային իրավական փաստաթուղթը, ինչպես հայտնի է, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ջարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագիրն է, որում ուղղակիորեն զետեղված է զարգացման իրավունքի իրականացման նպատակով պետությունների համագործակցության պարտավորությունը: Ջարգացման իրավունքի իրավական կարգավիճակի և բովանդակության հիմնախնդիրներն անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային իրավունքի աղբյուրների շրջանակներում: Մասնավորապես՝ այն պետք քննարկել միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների, միջազգային սովորույթի, ինչպես նաև փափուկ իրավունքի շրջանակներում:

Ինչպես հայտնի է, գոյություն չունի այնպիսի միջազգային իրավական փաստաթուղթ, որը հստակ և անվերապահորեն կսահմանի միջազգային իրավունքի աղբյուրները և կբացահայտի դրանց բնորոշումը: Սակայն ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդվածում նշված է, որ դատարանը իրեն հանձնված իրավական վեճերը պարտավոր է քննել՝ կիրառելով.

1. միջազգային պայմանագրերը,
2. միջազգային սովորույթները,
3. քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքները,
4. դատական վճիռները և հանրային իրավունքի հարցերով առավել որակյալ մասնագետների դոկտրինները:¹

Միջազգային իրավունքի այս աղբյուրները համարվում են ձևական և սովորաբար դառնում են պարտադիր միայն պետությունների և միջազգային իրավունքի մյուս սուբյեկտների կամարտահայտությամբ: Քանի որ միջազգային իրավունքը դեռևս ձևավորվում և զարգանում է միջազգային իրավունքի սուբյեկտների միջև առաջացող վեճերի և վիճելի իրավիճակների հանգուցալուծման ճանապարհով, ուստի հիմնական իրավական խնդիրը ոչ թե նորմի առկայությունն է, այլ միջազգային իրավահարաբերությունների մյուս մասնակիցների համար դրա իրավաբանորեն պարտադիր լինելն է: Ինչպես արդարացիորեն նշել է Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դատարանի նախկին գլխավոր իրավական քարտուղար, ներկայումս Ժնևի համալսարանի պրոֆեսոր Հյու Թրիվլեյը, ցանկացած նորմ կամ ի-

¹ Statute of the International Court of Justice, article 38(1).

րավական ակտ նախ ձևավորվում է որպես հայեցակարգ, նախագիծ, առաջարկ, խորհրդատվական կարծիք, այնուհետև ամրագրվում է և ստանում իրավաբանորեն պարտադիր իրավական ակտի կարգավիճակ: Հիմնական հարցն այն է, թե որ պահից է նորմը դառնում իրավաբանորեն պարտադիր¹:

Ինչպես արդեն նշվեց, իրավական նորմի առկայությունը կախված է միջազգային իրավունքի պայմանական աղբյուրներից: Քանի որ միջազգային իրավունքը հիմնականում կարգավորում է հարաբերություններ պետությունների միջև, ուստի դրանք սահմանող իրավական նորմերը կարող են ձևավորվել այլ աղբյուրների հիման վրա, ինչպիսիք են՝ միջազգային կազմակերպությունների կոնվենցիաները, համաձայնագրերը, միջազգային տրիբունալների որոշումները, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը, միջազգային իրավունքի հանձնաժողովի առաջարկությունները և նույնիսկ ուսումնական նյութերը: Այս աղբյուրները լայնորեն ընդունված են միջազգայնագետների կողմից և միջազգային հարաբերությունների մասնակից լայն շրջանակներում: Եթե երկու պետություններ համաձայնության են գալիս իրավական նորմերի կիրառման հարցում, ապա դա վերածվում է իրավունքի նյութական աղբյուրի, իսկ այլ պետությունների համար դառնում է սովորության նորմ: Ի տարբերություն սովորության նորմերի, պայմանագրային նորմաստեղծման գործընթացին պետություններն ակտիվորեն մասնակցում են, և դրանցում հստակ նշված են պայմանագրի կողմ հանդիսացող պետությունների իրավունքները և պարտականությունները: Բազմակողմ պայմանագրերը իրավունքի աղբյուր են միայն պայմանագրի մասնակից կողմերի համար²:

Ինչպիսի՞ իրավական կարգավիճակ ունի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ջարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագիրը, արդյո՞ք այն իրավաբանորեն պարտադիր է, դասվում է այն միջազգային իրավունքի աղբյուրների շարքին, թե՞ ոչ՝ կփորձենք քննարկել: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն՝ Գլխավոր ասամբլեան ուսումնասիրություններ է կազմակերպում և հանձնարարականներ ներկայացնում հետևյալ նպատակներով.

1. աջակցություն միջազգային համագործակցությանը քաղաքականության բնագավառում և միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման ու դրա կողմնակցության խրախուսում,

2. աջակցություն միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահության ասպարեզներում և օժանդակություն բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների իրականացմանը՝ առանց ցեղային, սեռային, լեզվի և դավանանքի խտրականության³:

Առանձին դեպքերում Գլխավոր ասամբլեան ընդունում է պարտադիր որոշումներ, օրինակ՝ բյուջետային հարցերի վերաբերյալ, սակայն հիմնականում նրա որոշումները խորհրդատվական բնույթի են, և դրանց պարտադիր կատարման մեխանիզմների համակարգ գոյություն չունի: Ավելին, դրանք՝ որպես միջազգային իրավունքի աղբյուր, նույնիսկ նշված չեն ՄԱԿ-ի միջազգային դատարանի ստատուտի 38-րդ հոդվածում: Հայտնի իրավագետ, պրոֆեսոր Բլեյն Սլոունը նշում է, որ ՄԱԿ-ի ընդունած ցանկացած իրավական ակտ բարեխղճորեն պետք է կատարվի մասնա-

¹ St' u Hugh Thirlway, The sources of international law in Malcolm D. Evans (ed.) International law, Oxford, 2003, p. 117.

² St' u նույն տեղում, էջ 124:

³ United Nations Charter, art 13.

կից բոլոր սուբյեկտների կողմից, և դրանց կարևորությունն ու նշանակությունն անթույլատրելի է համադրել պարտադիր իրավաբանական ուժի հետ¹:

«Ջարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագրի վերլուծության պարագայում անհրաժեշտ է տարբերակել ՄԱԿ-ի հռչակագրերը իր հանձնարարականներից: Այս առնչությամբ պաշտոնական պարզաբանում է տվել Մարդու իրավունքների հանձնաժողովը՝ մասնավորապես նշելով, որ հռչակագրերի և հանձնարարականների միջև իրավաբանորեն ընդգծված տարբերություններ առկա չեն: Սակայն նշվում էր նաև, որ Գլխավոր ասամբլեան հռչակագրեր է ընդունում բացառապես առանցքային հարցերի շուրջ, և դրանք իրենց բնույթով ավելի սկզբունքային են²: Այս եզրահանգումը պատրաստում է քննարկել «Ջարգացման իրավունքի մասին» 1986 թվականի հռչակագիրը առավել հանգամանալից: Ցանկացած պարագայում գլխավոր հարցն այն է, թե ինչպես կարելի է իրավաբանորեն ոչ պարտադիր հռչակագրի կատարման համար ստեղծել պարտադիր ներգործության լծակներ՝ հիմնվելով միջազգային իրավունքի գործիքակազմի վրա:

Իրավաբանական գրականության մեջ միջազգային կազմակերպությունների կողմից տրված հանձնարարականների իրավական արժեքի և նշանակության վերաբերյալ նույնպես միանշանակ կարծիք չկա:

Համաձայն առաջին տեսության՝ հանձնարարականները իրավական կատեգորիա չեն դիտվում, և դրանք պետք է ընկալել ոչ իրավական տեսանկյունից: Այս տեսակետի կողմնակիցներն են հայտնի միջազգայնագետներ Ջեյմս Լեսլի Բրիերլին, Հանս Կելսենը և դատավոր Լատերպախտը³:

Մյուս դիտարկման համաձայն՝ միջազգային կազմակերպությունների կողմից տրված հանձնարարականները ունեն ոչ թե իրավական, այլ բարոյական նշանակություն և ազդակներ են միջազգային հարաբերությունների կարգավորման հարցում: Այս մոտեցումը կիսում է նաև գերմանացի դատավոր Կլաեստադը:

Եվ վերջապես երրորդ դիտարկման համաձայն՝ միջազգային կազմակերպությունների հանձնարարականները իրավական կատեգորիա են և ունեն իրավական նշանակություն, քանի որ ձևավորում են միջազգային սովորութային իրավունք: Ինչպես նշում էր պրոֆեսոր Բլեյն Սլոունը, զարգացման իրավունքի իրականացման վերաբերյալ տրված հանձնարարականների շնորհիվ ձևավորվեց կայուն և ամուր հիմք զարգացման իրավունքը սովորութային իրավունքում ինտեգրելու և ներառելու համար: Պրոֆեսոր Սլոունը նախընտրում է քննարկել և ուսումնասիրել հանձնարարականների հիման վրա սովորութային իրավունքի ստեղծման նշանակությունը և կարևորությունը, քան հանձնարարականների իրավական բնույթն ու կատարման պարտադիր լինելու հավանականությունը⁴:

Առավել մեծ ճանաչում ունեցող միջազգայնագետներ նպատակահարմար են համարում քննարկել զարգացման իրավունքը միջազգային սովորութային իրավունքի համատեքստում: Չնայած Գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձևերը հիմնականում չեն հանդիսանում իրավաբանորեն պարտադիր ակտեր, սակայն նրանք կարող են սահմանել ու ձևավորել միջազգային իրավունքի սկզբունքներ և կարող են հա-

¹ St' u Blain Sloan, General Assembly Resolutions Revisited, British year book of international law, LVIII 1987, p. 39.

² Committee on Human Rights, Annual report on Human Rights 2014.

³ St' u J. L. Brierty, The Law of Nations, Oxford, Clarendon Press, 1963, p. 107, Hans Kelsen, The Law of the United Nations, London, Steven & Sons Limited, 1950, pp 195-196, 198-216, J. Lauterpacht, Voting procedure on Questions relating to reports and petitions, 1955, p.120.

⁴ Blain Sloan, նշվ. աշխ., էջ 88:

մարվել դեկլարատիվ: Դեկլարատիվ բանաձևերը դառնում են իրավաբանորեն պարտադիր սովորության իրավունքի ուժով: Սովորության նորմեր պարունակող փաստաթղթերը բազմաթիվ տարածայնությունների առիթ են դառնում, և դրանց կիրառումը գործնականում առավել քան վիճելի է: Սովորության պրակտիկայի հիման վրա ձևավորվում են միջազգային իրավունքի նոր ինստիտուտներ և ճյուղեր, ինչպիսիք են օրինակ՝ կիբեր իրավունքը, տեղեկատվական տեխնոլոգիաների իրավունքը:

Ջարգացման իրավունքի նորմատիվային բովանդակության իրավական քննրկման համար առանցքային նշանակություն ունի ՄԱԿ-ի միջազգային դատարանի քննած *Գաբչիկովո-Նադմարոշ* նախագծի վերաբերյալ Հունգարիան ընդդեմ Սլովակիայի գործը: Այս բողոքի հիման վրա դատարանի ընդունած որոշման կապակցությամբ դատավոր Վիրամանտրին տվել է հատուկ կարծիք, որն ածանցվում է զարգացման իրավունքի նորմատիվային բովանդակությանը:

Մասնավորապես, դատավոր Վիրամանտրին, խոսելով զարգացող պետությունների զարգացման իրավունքի իրականացման մասին, մատնանշել է, որ այն ժամանակակից միջազգային իրավունքի կարևոր սկզբունքներից է, որի իրագործման արդյունավետությունից է կախված միջազգային հարաբերությունների հետագա կառուցման ընթացքը: Այս հատուկ կարծիքն էապես մեծացրեց զարգացման իրավունքի իրավաբանական բովանդակությունը և նշանակությունը¹:

Ջարգացման իրավունքի նորմատիվային բովանդակության լիարժեք ուսումնասիրության համար անհրաժեշտ է քննարկել նաև զարգացման իրավունքի և փափուկ իրավունքի հարաբերակցության խնդիրները:

Փափուկ իրավունք տերմինը դասվում է միջազգային իրավունքի այն գործիքների թվին, որոնք չունեն իրավաբանական պարտադիր ուժ: Փափուկ իրավունքը զարգացման այն անցումային հարթակն է, որից հետո իրավական ոչ պարտադիր նորմը ձևափոխվում է կոշտ իրավական նորմի: Փափուկ իրավունքին վերաբերող եզրահանգումները ևս բազմաթիվ անհամաձայնությունների պատճառ են դառնում ժամանակակից միջազգային իրավունքում: Կարծիք կա, որ փափուկ իրավունքը, չունենալով իրավաբանական պարտադիր ուժ, որևէ դերակատարում չունի միջազգային իրավահարաբերությունների կարգավորման գործում: Սակայն այս տեսակետը կարելի է վիճարկել հետևյալ հիմնավորմամբ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը Գլխավոր ասամբլեայի ընդունած բանաձև էր, որը ուներ փափուկ իրավունքի իրավական կարգավիճակ, բայց միևնույն ժամանակ անվերապահորեն ընդունվում էր ՄԱԿ-ի բոլոր մասնակից պետությունների կողմից: Այնուամենայնիվ ժամանակի ընթացքում այն վերափոխվել է պարտադիր իրավական փաստաթղթի և այսօր մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն հիմնասյուններից է:

Ջարգացման իրավունքը նույնպես կարելի է դիտարկել փափուկ իրավունքի համատեքստում՝ ակնկալելով, որ այն՝ որպես մարդու իրավունքների ինստիտուտի մաս, կարող է վերափոխվել՝ դառնալով միջազգային իրավական փաստաթուղթ:

Ջարգացման իրավունքը դիտում է որպես զարգացող երկրների արդարացի պահանջ՝ ուղղված զարգացած պետությունների դեկավարությանը²:

¹ Case concerning the Gabchikovo-Nagymaros project, Hungary via Czechoslovakia, 1977.

² Տե՛ս *Khurshid Iqbal*, The right to development in international law, case of Pakistan, Routledge London, p. 117.

Հայտնի իրավագետ Չինկինը նշում է, որ համաշխարհային տնտեսական զարգացումը հանգեցնում է զարգացող երկրների կողմից տնտեսական ռեսուրսները հավասարաչափ օգտագործելու արդարացի պահանջի: Առհասարակ զարգացման իրավունքն առաջացել է տնտեսապես և աշխարհագրորեն անբարենպաստ վիճակում գտնվող պետությունների համար զարգացման հավասարազոր պայմաններ ապահովելու նպատակով¹: Ջարգացման համար հավասար պայմանների գաղափարը ի սկզբանե ընկած է եղել նոր տնտեսական քաղաքականության հիմքում, որի շրջանակներում ընդունված բանաձևերը նույնպես փափուկ իրավունքի կարգավիճակ ունեին:

Խոսելով փափուկ իրավունքի մասին՝ միջազգայնագետ Ռուփոյը նշել է, որ այն բարձրաձայնում է այն բոլոր հայեցակարգերը, որոնք հետագայում դառնում են երկկողմ և բազմակողմ պայմանագրեր, որոնց հիման վրա էլ կարգավորվում են ժամանակակից տնտեսական հարաբերությունները²:

«Ջարգացման իրավունքի մասին» հռչակագիրը սահմանում է, որ պետությունները պարտավոր են համագործակցել զարգացման բնականոն ընթացքն ապահովելու, ուժեղացնելու և զարգացումը խոչընդոտող հանգամանքների վերացման կարևորագույն գործում: Պետությունները պարտավոր են անհատական և կոլեկտիվ քայլեր ձեռնարկել միջազգային զարգացման քաղաքականության մշակման և զարգացման իրավունքի իրականացման համար: «Ջարգացման իրավունքի մասին» հռչակագրի հիմնական նպատակը հավասարության և արդարության ապահովումն է միջազգային հարաբերություններում:

Փափուկ իրավունքը բավականին մեծ ազդեցություն ունի նաև ներպետական իրավական համակարգի վրա: Այսպիսի կարգավիճակ ունեցող միջազգային իրավական փաստաթղթերի բովանդակությունը իմպլեմենտացվում է ներպետական իրավական համակարգ: Այսպես, օրինակ՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի դրույթներն ուղենիշային դեր ունեին գրեթե բոլոր պետությունների ներպետական դատական ատյանների համար:

«Ջարգացման իրավունքի մասին» հռչակագիրը կիրառվում է նաև պետությունների կողմից արտաքին քաղաքականության մշակման, տնտեսական հարաբերությունների վերլուծության ժամանակ: Հռչակագրի դրույթներին համապատասխան մշակվում են զարգացման իրավունքի արդյունավետ իրագործման մեխանիզմներ, ներպետական միջոցառումներ՝ կայուն զարգացման գործընթացներ ապահովելու համար:

Վերջապես անհրաժեշտ ենք համարում քննարկել այն հարցը, թե ինչ գործոններ են նպաստում, որ Գլխավոր ասամբլեայի իրավաբանորեն ոչ պարտադիր բանաձևերը վերափոխվեն միջազգային սովորության մարմերի: Այս համատեքստում կարելի է թվարկել բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են՝ բանաձևերի լեզուն, քվեարկության ընդհանուր արդյունքները, ներպետական իրավական համակարգում իմպլեմենտացիան, պետությունների պրակտիկան և այլն:

Բանաձևի ընդունման քվեարկության արդյունքները քննարկելու պարագայում կարելի է եզրակացություններ անել զարգացման իրավունքի իրականացման նկատմամբ մասնակից պետությունների դիրքորոշման վերաբերյալ: «Ջարգացման իրա-

¹ Տե՛ս **C.M. Chikin**, *Challenge of soft law, development and change in international law*, 1989, p. 855.

² Տե՛ս **Rene Jean Dupuy**, *Declaratory law and programmatic law, A Quest for Universal Peace*, Leyden, p.252.

վունքի մասին» հռչակագրի ընդունման համար հիմնականում կողմ են քվեարկել զարգացող երկրները: Արևմտյան ութ գերտերություններից վեցը ձեռնպահ է մնացել: Ամերիկայի Միացյալ Նահանգները միակ պետությունն է, որ դեմ է քվեարկել «Ջարգացման իրավունքի մասին» հռչակագրի ընդունմանը:

Վերջին տասնամյակում զարգացման իրավունքը կյանքի կոչելուն ուղղված գրեթե բոլոր բանաձևերն ընդունվել են միաձայն: Այս քվեարկության արդյունքները փաստում են, որ չնայած զարգացման իրավունքի վերաբերյալ հիմնական միջազգային փաստաթղթերը իրավաբանորեն պարտադիր չեն, սակայն պետությունները կարևորում են դրանք և պատրաստակամ են իրականացնել զարգացման գործընթացին նպաստող քաղաքականություն:

Ջարգացման իրավունքի վերաբերյալ դրույթները հատուկ ուղղված չեն եղել միջազգային կազմակերպությունների գործունեությանը: Սակայն մարդու իրավունքների մասին Աֆրիկյան խարտիայի մեջ զարգացման իրավունքի մասին հիմնադրույթները գետեղել են առանձին գլխում և նշված են որպես մարդու անխախտելի իրավունքներ: Վերջին տարիների դատական իրավասություն ստացած Մարդու իրավունքների աֆրիկյան դատարանի պրակտիկան կարող է դրական ազդեցություն ունենալ զարգացման իրավունքի ճանաչման և իրագործման համար:

Եզրափակելով փաստենք, որ միջազգային սովորույթային իրավունքի նորմերի իրավական պարտադիրության վերաբերյալ տարակարծությունները «Ջարգացման իրավունքի մասին» հռչակագրի՝ որպես Գլխավոր ասամբլեայի բանաձևի իրավական բնորոշման վերաբերյալ վեճերը դեռևս շարունակվում են: Սակայն այսօր, վերլուծելով պետությունների պրակտիկ գործունեությունը, նրանց արտաքին և ներքին քաղաքականությունը, կարող ենք նշել, որ արդեն բարենպաստ պայմաններ են ստեղծվում զարգացման իրավունքի հետագա իրավական ամրապնդման համար:

Ջարգացած պետությունների կողմից զարգացման իրավունքի իրականացման նկատմամբ հետևողական քաղաքականության իրականացումը, զարգացող պետություններին տրամադրվող շարունակական օգնությունները, այն միջազգային գործիքակազմերն են, որոնց միջոցով ձևավորված պրակտիկան վերածվում է իրավաբանորեն պարտադիր նորմերի: Հասկանալի է, որ միջազգային փոխօգնության ձևավորված պրակտիկայում բացակայում է *opinio juris*-ը, որի արդյունքում էլ զարգացման իրավունքի իրականացման վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված փաստաթղթերը չեն ընդունվում որպես միջազգային իրավունքի աղբյուրներ:

«Ջարգացման իրավունքի մասին» հռչակագիրը նաև բարոյական մեծ նշանակություն ունի զարգացող և զարգացած պետությունների միջև իրավահարաբերությունների կառուցման առումով: Այն ուղենիշային է նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային իրավական ինստիտուտների պրակտիկայի համար:

Կարևոր է նաև ընդգծել, որ հռչակագիրը ևս մեկ անգամ շեշտեց պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների միմյանց հետ համագործակցելու պարտավորությունը, որը մինչ այդ ուղղակիորեն նշված չէր զարգացման իրավունքի իրականացման վերաբերյալ միջազգային որևէ փաստաթղթում:

НОРМАТИВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРАВА НА РАЗВИТИЕ В СОВРЕМЕННОМ МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ

Ани Симонян

*Преподаватель кафедры европейского
и международного права ЕГУ*

Статья посвящена анализу правовой сущности понятия права на развитие, которое является наиболее дискуссионным аспектом концепции права на развитие в современном международном праве. В статье рассмотрен правовой статус Декларации права на развитие в свете источников международного публичного права, в частности, в соотношении с международным обычаем, в отношении общих принципов права, а также мягкого права (soft law).

THE LEGAL STATUS OF THE CONCEPT OF THE RIGHT TO DEVELOPMENT IN PUBLIC INTERNATIONAL LAW

Ani Simonyan

Lecturer at the YSU Chair of European and International Law

In this article the main legal problems concerning the legal status of the concept of the right to development are discussed. The right to development is analysed in the light of traditional and new sources of international law, such as international custom, soft law, general principals of international law, legal consensus.

Բանալի բառեր – զարգացման իրավունք, զարգացման իրավունքի իրականացում, միջազգային սովորույթ, փափուկ իրավունք, իրավական կոնսենսուս:

Ключевые слова: международный обычай, мягкое право, право на развитие, процесс развития

Key words: Right to development, realization of the right to development, soft law, recommendation, custom, customary law, opinio juris